928. Ս. ՍԱՐԳԻՍ. մատուռի վրա 5 տող.

Թ 1882 ՇԻՆԵՑԻՆՔԱՅՍ
ԸՍ ՍԱՐԳԻՍԵԿԵՂԵՑԻՆ
ԾՐՈՍՐԴՔ ՏԻՐԱՑՈ
ՏԻՐՈՍՍԵՍԱՐԳԻՍՍ
ՑԻՔԲ Ի ՏՐ ԱՄԷՆ

Թ[ՎԻՆ] 1882 ՇԻՆԵՑԻՆՔ ԱՅՍ
ՍԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ
[ԾԱՁ]ԱՐՈՍԻ ՈՐԴԻՔ ՏԻՐԱՑՈ
[ՍԱՐ]ՏԻՐՈՍՍ ԵՒ ՍԱՐԳԻՍՍ:
[ՅԻՇԵ]ՑԷՔ Ի ՏՐ: ԱՄԷՆ:

Ծանոթ. Մատուռը գտնվում է գյուղի հյուսիսային կողմի գերեզմանոցում, բլրի վրա: Դա միանավ փոքր սրահ է՝ առնվազն XIII դ. հնությամբ, որը միայն նորոգվել է 1882 թ-ին: Արձանագրության կրող երեսակալ խոշոր քարը միտումնավոր հանվել-նետվել է ցած, կոտրվել է ներքին ծախ եզրը:

929. ԽԱՉՔԱՐ. թևերի տակ, 1 տող.

ԹՎ[ԻՆ] ՈԼԴ (1185):

Ծանոթ. Նույն գերեզմանոցում է, քարհանքից ոչ հեռու ընկած, քիվին, եղծված հիշատակագիր:

930. ԽԱՉՔԱՐ. Նույն տեղում՝ քարհանքից 0,5 կմ հյուսիս-արևելք, քիվին 1 տող (XII-XIII դդ.).

ՏՐ ԱԾ ՅՍ ՔՍ

ՀՊՎԱ

931. ԽԱՉՔԱՐ. երկու բեկոր,գյուղից 4 կմ հյուսիս, ձորի մեջ.

Ի Թ Ո . . . ԱՒՈՐՈՒԹԵ, ՊԱՐՈՆ ՍԱՐԳՍԻ ...:

Ծանոթ. Ընդարձակ արձանագրությունից կարդացվում է այսքանը:

ՄԱՐՑ

Գտնվում է բարձրադիր հարթության վրա, Դսեղից հարավ-արևելք ձորի ափին: Ձորի միջով հոսում է Բաբաջանի գետակը, որը թափվում է Դեբեդի մեջ: Հնում այս ձորի շրջակայքում եղել են 24 գյուղեր, որոնցից շատերի տարածքում պահպանվում են մատուռների, հյուրատների, կամուրջի ավերակներ, հանգստարաններ, խաչքարեր: Ճարտարապետական հուշարձաններից առավել հիշարժանը Իգատակ գյուղատեղի երկու եկեղեցիներն են: Երկուսն էլ միատեսակ ուղղանկյուն խորանով միանավ սրահներ են: Ինչպես դրանցից մեկի արձանագրությունն է հավաստում, այն կառուցվել է 1255 թ.:

Արձանագրություններ ունեն նաև գերեզմանոցների խաչքարերը, ինչպես և բազմաթիվ այլ խաչքարեր՝ սփռված շրջակայքում, հատկապես «Ճգնավորի խաչ» կամ «Ճգնավորի թալա» կոչված վայրում, գյուղից 4 կմ հարավ-արևելք: Այստեղ է գտնվում նաև խաչելության պատկերով գեղաքանդակ մեծարվեստ մի խաչքար՝ իր ձևով հիասքանչ, սակավ նմուշներից մեկը: